Քրիստափորի դալը (1898)։

Յովնան Նորէն մեկնում է դէպի Պարսկաստան, Թաւրիզ, այս անգամ արդէն իր զուիցերուհու հետ։ Ամուսինները մի երկու տարի վարում են Լիլաւայի (Թաւրիզ) հայոց դպրոցը, մինը իբրեւ տեսուչ, միւսը իբրեւ վարժուհի, երկուսն էլ, իբրեւ Դաշնակցութեան գործիչներ։ Վարժուհին արագօրէն ընտելանում է իր նոր ու խորթ միջավայրին, աւելի եւս կապւում է հայութեան հետ, աւելի ջերմ եւ մոլեռանդ սիրով ուսումնասիրում է հայ լեզուն եւ այնքան է կատարելագործում, որ Կովկասի մէջ հայկական շրջաններում հիացնում էր բոլորին եւ ամօթահար անում մեր փափկասուն ու ռուսախօս տիկիններին...

Շուտով, սակայն, ճակատագիրը ցոյց է տալիս երջանիկ զոյգին իր անողոք ժանիքը։ Ծանր, անբուժելի ցաւը բոյն է դնում տիկնոջ կրծքում, եւ երկուսով շտապում են դէպի Զուիցերիա։ Յոնանը դարձեալ մի երկու տարի զբաղւում է բիւրօական գործերով, իսկ տիկինը բժշկւում է լեռներում։ Ոչ մի բժշկութիւն սակայն չի օգնում։ Եւ այնուհետեւ, գրեթէ ամբողջ քառորդ դար, երկուսի կեանքը մի անհատնում մարտիրոսութիւն է, մի դանդաղ ու անողորմ մահացում։ Մինը մեռնում էր, աստիճանաբար հալւում ֆիզիքապէս, միւսը մեռնում էր մանաւանդ հոգեպէս։

Երկուսի կեանքն էլ իրօք վերջացած էր։ Բայց նոյն անտրտունջ, նոյն սուսյիկեան արիութեամբ շարունակում են իրենց քառիկը, վերադառնում են դարձեալ Թաւրիզ, նուիրւում են դարձեալ երկար տարիներ իրենց սիրած պաշտօնին։

Երկուսն էլ ժողովրդական էին Թաւրիզում, նոյնիսկ ոչ-դաշնակցական շրջաններում։ Յոնանը՝ իր հմուտ ու կարող տեսչութեամբ եւ իր շիտակ, անկաշառ բնաւորութեամբ, Հօրթանսը՝ իր զարմանալի ընդունակութիւններով եւ մանաւանդ իր ջերմ հայկական հայրենասիրութեամբ։

Սակայն, օր աւուր սպառւում է կեանքի կանթեղը... Թոքախտը, նպաստաւորուած կեանքի ճնշող պայքարից, ապրուստի սուղ միջոցներից, շարունակում է իր աւերումը եւ նախկին կայտառ, քաջառողջ զուիցերուհին կմախք դարձած, դալիս է Նորէն իր Արպեան հայրենիքը, այս անգամ մեռնելու համար...

Եւ մահը տեղի ունեցաւ իր ամուսնու մահուանից երկու տարի առաջ։ Այդ մահը իսպառ խորտակեց եւ միւսին... Ամէնքը չէնջում էին, որ Յովնանի օրերն եւս համրուած են։ Նա մընում է, որպէս ուրուական, խմբագրատան չորս պատերի մէջ, որոնք շարունակ լսում են հառաչանք ու հեծեծանք։ Շարունակում է դարձեալ ապրել եւ յուզուել հայրենիքի ու կուսակցութեան ցաւերով, տանում է ընթացիկ գործերը, խորհուրդներ ու հրահանգներ է տալիս մօտ ու հեռու ընկերներին։

Ամառը գնացի վերջին այցելութեան։ Երեք տարի էր հեռացած էի Ժընեւից։ Գիտէի, որ Յոնանը իր վերջին հանգրուանումն էր։ Ծանր սրտով քալեցի դէպի մեր փոքրիկ, համեստ վիլլան, կորած Champel-ի ծառաստանում։ Բարձրացայ դէպի հիւանդը։ Պառկած էր անշուք մահճի վրայ, արեւոտ սենեակներից մէկում։ Մեն-մենակ, շուրջը ոչ ոք։ Բժիշկն արդէն արգիլած էր երկար խօսակցութիւն։

Ուրախութեան ժպիտը փայլեց, բայց նրա արտանքից նշմարւում էր անյատակ վիշտը։ Զգում էի, որ մահը իր դաժան մագիլներով ճախրում է այդ ազնիւ դէմքի վրայից, որ նա չուտով պիտի դար գոցելու այդ խոշոր ու սիրուն աչքերը, վերջ տալու 25 տարուան մի ցաւոտ մղձաւանջի։

Եւ սկսեց անվերջ հարց ու փորձ։ Ինչե՞ր չէին անցել «Երկրի» մէջ ու Կովկասում, այդ երեք տարուայ ընթացքում... Ես առաջին սուրհանդակն էի։ Ցուզում էր, արտասւում եւ անվերջ խօսում։

Իր մասնաւոր կեանքին գալով, իմացայ, որ սպառւում են միջոցները։

— «Մօտիկ ընկերներս, շնորհակալ եմ, չմոռացան ինձ... Այս երկու տարին շարունակ օգնեցին, բայց այժմ այլեւս Կովկասից հնարաւոր չէ դրամ փոխադրել... Թէեւ հիւանդ, պէտք է մի կերպ Կովկաս գնամ...»։

Ամերիկայի ընկերները ղրկեցին մի գումար։ Բայց սաստիկ նեղում էր հիւանդին այն միտքը, որ մինչեւ հայրենիք վերադառնալը պէտք է ապրի կուսակցական միջոցներով։ Որքան ժուժկալ ու սակաւապետ էր իր մեծ ընկերների պէս, նոյնքան բծախնդիր էր կուսակցութեան դրամարկղի վերաբերմամբ...